ԳՐԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՆՄՈՒՇ-ՕՐԻՆԱԿ

(Քրեական և քրեական դատավարություն)

1. Դատախազը, հիմք ընդունելով, որ դատավորը քննության առնելով քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին քննիչի որոշման դեմ տուժողի բողոքը, այն բավարարել է՝ արձանագրելով տուժողի իրավունքների և օրինական շահերի խախտումներ և պարտականություն սահմանել վերացնելու դրանք, գործի դատական քննության փուլում միջնորդություն է ներկայացնում նախագահող դատավորին ինքնաբացարկ հայտնելու մասին, քանի որ մեղադրանքի վերաբերյալ արդեն ունի կանխակալ կարծիք:

Ինչ որոշում պետք է կայացնի դատավորը.

ա/ միջնորդությունը մերժելու մասին, քանի որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում կայացված դատական ակտերը նախադատելի չեն,

բ/ միջնորդությունը մերժելու մասին, քանի որ դատավորները քրեական գործերը և նյութերը լուծում են իրենց ներքին համոզմամբ ներկայացված ապացույցների պատշաճ հետազոտման հիման վրա և կաշկանդված չեն գործի մինչդատական վարույթում արված եզրահանգումներով,

գ/ միջնորդությունը բավարարելու մասին և ինքնաբացարկ հայտնելու մասին, քանի որ դատավորն արդեն իսկ մասնակցել է տվյալ գործի քննությանը այլ վարույթի շրջանակներում և ունի կանխակալ կարծիք մեղադրանքի մասին,

դ/ միջնորդությունը մերժելու մասին, քանի որ օրենքով ինքնաբացարկ հայտնելու նման հիմք առկա չէ:

2. Անձը ենթակա է քրեական պատասխանատվության՝

ա) իր և իր անչափահաս երեխայի կատարած հանցանքի համար

բ) իր և իր խնամակալության տակ գտնվող անձանց կատարած հանցանքի համար

գ) միայն անձամբ իր կատարած հանցանքի համար

դ) իր, իր խնամակալության տակ գտնվող և իր հոգաբարձության ներքո գտնվող անձանց կատարած հանցանքի համար:

3. 2003 թվականի հունվարին ծնված Կ-ն 2016 թվականի հոկտեմբերին և 2017 թվականի փետրվարին մեկ միասնական դիտավորությամբ կատարել է գույքի գաղտնի հափշտակություն՝ ընդհանուրը 3.400.000 (երեք միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամի չափով: Նախաքննությամբ պարզվել է, որ յուրաքանչյուր անգամ Կ-ն հափշտակել է 1.700.000 (մեկ միլիոն յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ արժողությամբ գույք:

Ինչպե՞ս պետք է որակվի Կ-ի արարք(ներ)ը

ա) խոշոր չափերով գողություն,

բ) առանձնապես խոշոր չափերով գողություն,

գ) առանձնապես խոշոր չափերով գողության փորձ,

դ) երկու դրվագ խոշոր չափերով գողություն՝ հանցանքների համակցությամբ: